

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 06-ին՝ ժամը 15.00-ին Դարպասի համայնքապետարանի համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի
ժամը՝ 15.00

1. Դարպաս համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 06-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ա.Ալոյան

2. Դարպաս համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

զեկ. Ա.Ալոյան

3. Դարպաս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

5. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

զեկ. Դ.Վարդանյան

6. Համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

7. Դարպաս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

8. Դարպաս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա.Ալոյան

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով, Դարպաս համայնքի ավագանին որոշում է. Հաստատել Դարպաս համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 06-ի նիստի օրակարգը:

1. Դարպաս համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 06-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Դարպաս համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
3. Դարպաս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
6. Համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
7. Դարպաս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:
8. Դարպաս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82 հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դարպաս համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել 2019 թվականի Դարպաս համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով. Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դարպաս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ
43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1. Դարպաս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 43-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից թիվ 1-ից 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

- 1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
- 2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵՅ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դարպաս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը՝ ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև մեկ տարի ժամկետով առանց մրցույթի համայնքի ղեկավարի կողմից համայնքի արոտօգտագործողների հետ արոտավայրերից օգտվելու պայմանագրերի կնքելուն:
2.Արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածներով, „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

- 1.Տալ համաձայնություն Դարպաս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու համար՝ 1 լոտով:
- 2.Լոտ 1. 06-033-0001-0001 ծածկագրի 0.03 հա գյուղ. նշանակության այլ հողատեսքի մեկնարկային գինը 15000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 4000 դրամ, նախավճարը 750 դրամ, քայլի չափը՝ 750 դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.Հողամասը չի դասվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի դասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱԼԱՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Ղեկավարվելով „Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝ Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դարպաս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության վարելահողերը վարձակալության իրավունքով՝ 25 տարի ժամկետով տրամադրելու՝ 3 լոտով:
Լոտ 1 . 06-033-0236-0002 ծածկագրով 0.249 հա 3-րդ անջրդի վարելահողի մեկնարկային գինը սահմանել 1700 ՀՀ դրամ, մրցույթի մասնակցության վճար՝ 4000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 % -ը:
Լոտ 2. 06-033-0067-0005 ծածկագրով 1 հա 4-րդ անջրդի վարելահողի մեկնարկային գինը սահմանել 4100 ՀՀ դրամ, մրցույթի մասնակցության վճար՝ 4000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 % -ը:
Լոտ 3. 06-033-0067-0006 ծածկագրով 0.29003 հա 4-րդ անջրդի վարելահողի մեկնարկային գինը սահմանել 1200 ՀՀ դրամ մրցույթի մասնակցության վճար՝ 4000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 % -ը:
2. Հողամասը չի դասվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի դասին:
3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ